ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 23.10.2006թ.
COM (2006) 614 վերջնական

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ներածություն

«Ցկյանս ուսումնառության Եվրոպական տարածքի իրագործման» (նոյեմբեր 2001) մասին հանձնաժողովից ստացած հաղորդագրության և ցկյանս ուսումնառության վերաբերյալ Խորհրդի որոշման մեջ (հունիս 2002) ընդգծվում է ցկյանս ուսումնառության կարևորությունը մրցունակության և աշխատանքի տեղավորման ունակության, ինչպես նաև սոցիալական ինտեգրման, ակտիվ քաղաքացիության և անձնական զարգացման համար: Մեծահասակների կրթությունը ցկյանս ուսումնառության կարևորագույն տարր է:

Ցկյանս ուսումնառության սահմանումները տարբերվում են. սույն հաղորդագրության նպատակների համար այն սահմանվում է որպես *մեծահասակների կողմից ստանձնելիք ուսումնառության բոլոր ձևերը սկզբնական կրթություն և ուսուցում ստանալուց հետո,* ինչքան էլ որ այս գործընթացը շարունակվի (օրինակ՝ ընդգրկելով բարձրագույն կրթությունը):

Կրթությունն ու ուսուցումը կարևոր գործոններ են Լիսաբոնի ռազմավարության՝ տնտեսական աճի, մրցունակության և սոցիալական համախմբվածության բարձրացման նպատակների իրագործման համար: Մեծահասակների կրթության դերն այս համատեքստում, ի հավելումն իր օժանդակությանը անձնական զարգացմանն ու իրագործմանը, մեծապես ճանաչվում է անդամ պետությունների ազգային բարեփոխումների ծրագրերում: Այնուամենայնիվ, որոշ բացառություններով, իրագործումը թերի է մնում: Կրթության և ուսուցման շատ համակարգեր դեռևս կենտրոնացած են երիտասարդների կրթությանն ու ուսուցմանը, և քիչ առաջընթաց է արձանագրվել համակարգերի փոխման գործում՝ ցկյանս ուսումնառության անհրաժեշտությունն արտացոլելու ուղղությամբ: Լրացուցիչ 4 միլլիոն մեծահասակներ պետք է մասնակցեն ցկյանս ուսումնառությանը, որպեսզի հասնեն «Կրթություն և Ուսուցում 2010» գործընթացի շրջանակներում անդամ պետությունների կողմից ընդունված վերլուծության տվյալների բազայում առկա մասնակցության ցուցանիշներին: Վերջին հետազոտությունը հաստատում է մեծահասակների ուսումնառության մեջ ներդրման կարևորությունը: Հանրային և մասնավոր նպաստներն ընդգրկում են աշխատանքի տեղավորման ավելի մեծ ունակություն, ընդլայնված արտադրողականություն և բարձրորակ աշխատատեղեր, կրճատված ծախսեր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ գործազրկության նպաստները, նպաստների վճարումները և արտոնյալ պայմաններով կենսաթոշակները, ինչպես նաև սոցիալական մեծ եկամուտները, որոնք դրսևորվում են ակտիվ քաղաքացիական մասնակցությամբ, առավել ամուր առողջությամբ, հանցագործությունների թվաքանակի կրճատմամբ և անհատների բարեկեցությամբ: Մեծահասակների շրջանում անցկացված հետազոտությունը ցույց է տալիս, որ նրանք, ովքեր զբաղվում են ուսումնառությամբ, ավելի առողջ են՝ առողջապահական ծախսերի հետևողական կրճատմամբ:

Սույն հաղորդագրությունը կարևորում է մեծահասակների ուսումնառության էական օժանդակությունը աշխատանքի տեղավորման ունակությանն ու շարժունակությանը արդի աշխատաշուկայում, ինչպես նաև սոցիալական ինտեգրմանը՝ հիմնական կարողություններ ձեռք բերելու

միջոցով: Այն օգտագործում է «Կրթություն և Ուսուցում 2010» ծրագրի շրջանակներում անդամ պետությունների հետ ունեցած երկխոսությունից և Եվրամիության առկա կրթության և ուսուցման ծրագրերից ձեռք բերված փորձերից քաղված դասերը, հատկապես՝ Սոկրատես ծրագրի «Գրանդվիգ» գործողությունների ծրագրից: Այն նաև արտացոլում է հաղորդագրության մեջ տեղ գտած արդյունավետության և արդարության մասին մոտեցումը, այսինքն՝ հնարավոր են բարեփոխումներ, որոնք կրթության և ուսուցման համակարգերն առավել արդյունավետ ու թափանցիկ են դարձնում: Այն վկայում է, որ Կառուցվածքային Հիմնադրամները, և հատկապես՝ Եվրոպական Սոցիալական Հիմնադրամը ենթակառուցվածքների և ռազմավարությունների մշակմանն աջակցելու ներուժ ունեն: Այն ընդգծում է որոշակի հարցերի կարևորությունը՝ գենդերային իրավահավասարությունը, հատկապես՝ տվյալների հավաքման, ցկյանս ուսումնառության մատչելիության և ուսումնառության նախընտրած ձևերի տարբերությունների առնչությամբ:

Այն տրամադրում է ապագա «Գրանդվիգ» ծրագրի իրագործման համար անհրաժեշտ քաղաքականությունը, որը ցկյանս ուսումնառության 2007-2013թթ. համընդհանուր ծրագրի մաս կկազմի: Ի վերջո, այն առաջարկում է անդրադառնալ մեծահասակների ուսումնառությանը՝ ներգրավելով անդամ պետություններն ու շահագրգիռ կողմերը՝ հանգեցնելով 2007թ. գործողությունների ծրագրի մշակմանը:

2. Մարտահրավերները

Միշտ չէ, որ մեծահասակների ուսումնառությունն ըստ արժանվույն ճանաչվել է (այսինքն՝ տեսլականը, քաղաքականությունը, գերակայությունն և ռեսուրսները)՝ չնայած վերջին տարիներին ցկյանս ուսումնառության վրա դրված քաղաքական շեշտին: Քաղաքականության և իրականության միջև ստեղծված այս դիխոտոմիան նույնիսկ առավել ակնհայտ է դառնում, երբ դիտարկվում են Միության առջև ծառացած հիմնական մարտահրավերները:

Մրցունակություն

Եվրոպայի հիմնական տնտեսական մարտահրավերը, ինչպես առաջադրված է Լիսաբոնի ռազմավարության մեջ, տնտեսական աճի բարձրացումն ու աշխատատեղերի ստեղծումն է՝ միաժամանակ սոցիալական համախմբվածություն պահպանելով: Աշխարհի տարբեր տարածաշրջանների աննախադեպ առաջընթացն ընդգծում է նորամուծական, զարգացած, որակյալ կրթության և ուսուցման կարևորությունը՝ որպես տնտեսական մրցունակության հիմական գործոն: Որակավորման ընդհանուր մակարդակները պետք է բարձրանան՝ և՛ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանելու, և՛ քաղաքացիներին այսօրվա հասարակության մեջ գործելու հնարավորություն ընձեռելու համար: Այնուամենայնիվ, մոտ 72 միլլիոն ցածր որակավորում ունեցող բանվորներ կան Եվրոպայում ՝ աշխատուժի մեկ երրորդը, մինչդեռ դիտարկումները ցույց են տալիս, որ 2010թ. նորաստեղծ աշխատատեղերի միայն 15 տոկոսը նախատեսված կլինի ցածր որակավորում ունեցողների համար, իսկ 50 տոկոսը՝ կպահանջի բարձրագույն կրթությամբ աշխատողներ: Դեռ ավելին, Եվրոպայի բնակչության զգալի մասը դեռևս չունեն տպագրված տեղեկատվությունը հասկանալու և առօրյայում կիրառելու կարողություն: Բոլոր քաղաքացիների կողմից հիմնական կարողությունների ձեռք բերման ապահովումը մարտահրավեր է անդամ պետությունների համար: Հետազոտությունը ցույց է տալիս, որ բնակչության շրջանում հմտությունների արդար բաշխումն առավել ուժեղ ներգործություն ունի ընդհանուր տնտեսական զարգացման վրա:

Ժողովրդագրական փոփոխություն

Եվրոպան կանգնած է աննախադեպ ժողովրդագրական փոփոխությունների առջև, որոնք լուրջ ներգործություն կունենան հասարակության և տնտեսության, հետևաբար նաև կրթության և ուսուցման համակարգերի վրա:Եվրոպայի բնակչությունը ծերանում է. հաջորդ 30 տարիների ընթացքում ավելի երիտասարդ եվրոպացիների թիվը (մինչև 24 տարեկան) կիջնի 15 տոկոսով: Յուրաքանչյուր 3 եվրոպացիներից մեկը կլինի մոտ 60 տարեկան, իսկ յուրաքանչյուր տասից մեկը՝ մոտ 80 տարեկան: Այս զարգացումները լուրջ մարտահրավերներ են առաջադրում Եվրոպական սոցիալական մոդելի համար: Աշխատաշուկայում երիտասարդների կրճատված հոսքը և այն փաստը, որ յուրաքանչյուր 3 մարդկանցից (55-64 տարիքային խմբերում) միայն մեկն է վճարովի աշխատանք կատարում, կարևորում են մեծահասակների ուսումնառության անհրաժեշտությունը՝ աշխատաշուկայում երիտասարդների մասնակցությունն ակտիվացնելու, իսկ մեծահասակներինը՝ երկարածգելու նպատակով: Այն հատկապես հասցեագրված է դպրոցը վաղ ավարտողների խնդրին (6 միլլիոն 2005թ.), մինչդեռ միևնույն ժամանակ նպատակաուղղված է մինչև 40 տարեկան ցածր որակավորումներ ունեցողների հմտությունների ու հարմարվելու կարողությունների զարգացմանը՝ խրախուսելով նրանց բարձրացնելու որակավորման գոնե մեկ մակարդակ:

Մեծահասակների ուսումնառությունը կարող է երաշխավորել, որ ներգաղթը, որը որպես մասնակի հավասարակշռող մեխանիզմ է հանդիսանում՝ ծերացող բնակչության և որոշակի սեկտորներում հմտություններին համապատասխանելու և աշխատուժի պակասը լրացնելու համար, կարող է տեղի ունենալ այն կերպ, որը շահավետ է և՛ միգրանտների, և՛ հյուրընկալող երկրի համար: Շատ նոր միգրանտներ, նույնիսկ բարձր որակավորումներ ունեցողները, լեզվի և մշակույթի հետ կապված մեծ խնդիրներ են ունենում: Դեռ ավելին, քանի որ նրանց կարողությունները հաճախ թերագնահատվում և ինչպես հարկն է չեն բացահայտվում, նրանց հմտությունները թերօգտագործված են մնում աշխատաշուկայում: Աշխատաշուկայում ներգաղթածների, այդ թվում բարձր որակավորումներ ունեցողների, կարգավիճակը, որպես կանոն ավելի վատ է, քան Եվրամիության քաղաքացիների վիճակը: Սա վերաբերում է ոչ միայն նոր գաղթածներին, այլև միգրանտների երկրորդ և երրորդ սերունդներին, իսկ ավելի շատ՝ կին միգրանտներին:

Սոցիալական ինտեգրում

Վերջին զեկույցները հաստատում են, որ աղքատությունն ու սոցիալական բացառումը շարունակում են մնալ լուրջ մարտահրավեր անդամ պետությունների համար: Տարբեր հանգամանքներ և պայմաններ, ինչպիսիք են՝ սկզբնական կրթության ցածր մակարդակները, գործազրկությունը, գյուղական վայրերի մեկուսացումը և ծերացումը, բազմաթիվ մարդկանց դրդում են մեկուսացման՝ զրկելով նրանց հասարակության օգուտներից և ակտիվ քաղաքացի լինելուց: Աշխատանքի վայրում և առօրյա կյանքում Տեղեկատվական և Հաղորդակցական Տեխնոլոգիաներին (ՏՀՏ) չտիրապետելը և դրանց անհասանելիությունն առավել ակնհայտ է դարձնում այս բացառումը: Մեծահասակները, ովքեր չեն տիրապետում համակարգչային հմտություններին, զրկվում են հիմնական տեղեկատվությունից և հնարավորություններից, որոնք հասանելի են միայն թվային տեսքով: Մեծահասակների ուսումնառության հիմնական դերը սոցիալական բացառմանն արձագանքելն է:

3. Մեծահասակների ուսումնառության օրակարգի մշակում

Մեծահասակների որակավորումների ընդհանուր մակարդակի բարձրացումը՝ ցկյանս ուսումնառության համար ավելի շատ և ավելի լավ հնարավորություններ առաջարկելով, կարևոր է վերոհիշյալ մարտահրավերների արդյունավետության և թափանցիկության համար: Մեծահասակների ուսումնառությունը ոչ միայն օգնում է, որպեսզի նրանք դառնան որակյալ բանվորներ, ավելի իրազեկված և առավել ակտիվ քաղաքացիներ, այլ նաև նպաստում է նրանց անձնական բարեկեցությանը:

Այս ոլորտում քաղաքականություն մշակողների հիմնական մարտահրավերներից մեկն է՝ օպտիմալ կերպով օգտվել կրթության տարբեր հաստատություններից և կառուցվածքներից, որոնք բնութագրում են մեծահասակների ուսումնառության համակարգերը: Շատ գործընկերներ մասնակցում են քաղաքականության մշակման գործընթացին ու իրագործմանը՝ ներառյալ նախարարներ, սոցիալական գործընկերներ, եկեղեցիներ, հասարակական կազմակերպություններ և տարածաշրջանային ու տեղական իշխանություններ: Քաղաքական որոշումները կայացվում են կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական մակարդակով, իսկ երբեմն միաժամանակ տարբեր մակարդակներով ապակենտրոնացման բարձր աստիճաններ ներկայացնող երկրների հետ: Այս համատեքստում ներդաշնակությունն ու ամուր գործընկերությունները կարևոր են հաջորդականությունն ապահովելու, կրկնություններից խուսափելու և փոքրաքանակ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանն օժանդակելու համար: Ներդաշնակության շնորհիվ սահմանվում են գերակայություններ, մշակվում են քաղաքականություններ օրենսդրական բարեփոխումների աջակցությամբ և ապահովվում է դրանց իրագործումը: Այն նաև նպաստում է պոտենցիալ սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ու տեղեկատվության մատուցման մատչելիությանը:

Անդամ պետություններն իրենց Ազգային Բարեփոխումների Ծրագրերում ընդգրկել են ցկյանս ուսումնառության ամրագրմանն ուղղված նախագծեր և քաղաքականություններ: Այդ ծրագրերի իրագործմանը կարող են աջակցել Եվրոպական Կառուցվածքային Հիմնադրամը, հատկապես՝ Եվրոպական Սոցիալական Հիմնադրամը՝ մեծահասակների ուսումնառության ենթակառուցվածքներն ու մատչելիությունը բարելավելու նպատակով: Եվրամիության աջակցությամբ լավ ծրագրերի շատ օրինակներ են մշակվել անդամ պետությունների կողմից, որոնք կարող են մրցակից հանդիսանալ ուրիշների համար:

Անդամ պետությունները պետք է մշակեն մեծահասակների ուսումնառության արդյունավետ համակարգ՝ ներառելով այն ցկյանս ուսումնառության իրենց ռազմավարության մեջ՝ ապահովելով մասնակիցների աշխատաշուկա մտնելու հնարավորությունը, սոցիալական ինտեգրումը և պատրաստելով նրանց ակտիվ ծերացման:

Նրանք պետք է երաշխավորեն, որ ունեն համակարգեր, որոնք գերակայություններ մշակելու և դրանց իրագործումը վերահսկելու հնարավորություն են ընձեռում իրենց:

Կարևոր ուղերձներ

Հինգ կարևոր ուղերձներ են ներկայացվել մեծահասակների ուսումնառության շահագրգիռ կողմերի համար `

1. Մասնակցության խոչընդոտների բացահայտում:

Մեծահասակների մասնակցությունը կրթությանն ու ուսուցմանը մնում է սահմանափակ (Տես Հավելվածը): 2010թ. կտրվածքով մեծահասակների ուսումնառությանը մասնակցության ցուցանիշների (12.5 տոկոս) հետ համեմատությամբ՝ միջին ցուցանիշը 2005թ. կազմել է 10.8 տոկոս: Չնայած միջին ցուցանիշի փոփոխականությանը (1.1տոկոսից մինչև 34.7 տոկոս)՝ զգալի նմանություն կա անդամ պետություններում մեծահասակների ուսումնառության բաշխման մեջ. սկզբնական կրթության ամենացածր մակարդակներ ունեցողների, ծերերի, գյուղական վայրերի բնակիչների, հաշմանդամների մասնակցությունն ամենաքիչ հավանականն է բոլոր երկրներում: Անհատական մասնակցության խոչընդոտները կարող են կապված լինել քաղաքականության հետ, կարող են լինել տեղեկատվական (լավ և թարմ տեղեկատվության մատչելիության մակարդակը), կապված լինել կրթական հաստատության հետ (ընդունելության պահանջները, ծախսերը, ուսումնառության աջակցության մակարդակը, ուսումնառության արդյունքների էությունը և այլն), լինել իրադրային (կրթության մշակույթին արժեքը, չափահասի կենսամակարդակը, ընտանիքը, սոցիալական միջավայրը) և տարիքային (չափահասի՝ որպես սովորողի ինքնագնահատումն ու ինքնավստահությունը, հաճախ նախորդ կրթական փորձերի ձախողման հետ կապված): Լուրջ խոչընդոտներ կարող են հանդիսանալ նաև ժամանակի պակասը, իրազեկության և մոտիվացիայի բացակայությունը, քանի որ մարդիկ ինչպես հարկն է չեն գնահատում կրթությունը և հետևաբար չեն գիտակցում օգտակարությունը, ինչպես նաև տեղեկատվության պակասը, ֆինանսավորման բացակայությունը:

Անդամ պետությունների մարտահրավերը երկու նպատակ է հետապնդում՝ խթանել ակտիվ մասնակցությունը մեծահասակների ուսումնառությանը և հասցեագրել մասնակցության անհավասարակշռությունները ՝ ավելի արդար պատկեր ստանալու համար՝ շահագրգռելով, խրախուսելով, հնարավորություն ընձեռելով և աջակցելով այն չափահասներին, որոնց մասնակցությունը ուսումնառության բոլոր ձևերին՝ ֆորմալ, ոչ-ֆորմալ և ինֆորմալ, քիչ հավանական է: Սա պահանջում է նախատեսված հանրային ներդրումներ այն մարդկանց համար, ովքեր անցյալում այնքան էլ լավ չեն սպասարկվել կրթության և ուսուցման համակարգերի կողմից:

Մասնակցությունը մեծահասակների ուսումնառությանը պետք է խրախուսել տեղեկատվության որակի բարելավմամբ և այնպիսի վայրերի ուսումնառության ներուժի օգտագործմամբ, ինչպիսիք են՝ համայնքային կենտրոնները, սպորտային ակումբները, մշակութային հաստատությունները, ինչպես նաև սկզբնական կրթության և ուսուցման հաստատությունները:

Ուղերձ 1

Մեծահասակների ուսումնառության մասնակցության բարձրացումն ու այն առավել արդար դարձնելը շատ կարևոր է: Բոլոր շահագրգիռ կողմերը դեր ունեն այս կապակցությամբ, բայց հանրային իշխանությունները պետք է զբաղվեն խոչընդոտների վերացմամբ և պահանջարկի խթանմամբ՝ շեշտը դնելով հատկապես ցածր որակավորում ունեցողների վրա: Այն կընդգրկի բարձրորակ մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության համակարգերի մշակում՝ հիմնված ավելի ուսանողակենտրոն

մոտեցման վրա, ինչպես նաև նախատեսված ֆինանսական խրախուսման միջոցներ անհատների համար և աջակցություն՝ տեղական գործընկերություններ հիմնելու համար:

2. Մեծահասակների ուսումնառության որակի ապահովում

Մեծահասակների ուսումնառության ցածր որակը հանգեցնում է ուսումնառության ցածր արդյունքների: Որակը բազմանիստ է՝ տեղեկատվություն և մասնագիտական կողմնորոշում, կարիքների վերլուծություն, ժամանակակից կարիքներին ու պահանջներին համապատասխանող կրթության համապատասխան բովանդակություն, մատուցում, ուսումնառության աջակցություն, գնահատման մոտեցումներ, կարողությունների ճանաչում, վավերականացում և հավաստագրում: Վերոհիշյալների կարևորությունն ընդգծելու համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալի վրա՝

- ***Ուսուցման մեթոդների*** – Ուսուցման մեթոդներն ու նյութերը պետք է հաշվի առնեն մեծահասակների ուսումնառության մոտեցումներն ու հատուկ կարիքները: Ուսումնառության նախատեսված արդյունքները պետք է հստակ լինեն: Դեռ ավելին, մեծահասակները պետք է կարողանան օգտագործել ուսումնառության աջակցության ռեսուրսները, ինչպիսիք են՝ մասնագիտական կողմնորոշումը, գրագիտության ապահովումը և պահանջված հմտությունների զարգացումը:
- ***Կադրերի որակի*** - Մեծահասակների ուսումնառության համակարգում աշխատողների մասնագիտական զարգացումը կարևոր դեր ունի մեծահասակների ուսումնառության որակի ապահովման գործում: Բավարար ուշադրություն չի դարձվել մեծահասակների ուսումնառության կադրերի նախնական վերապատրաստման համար անհրաժեշտ բովանդակության և գործընթացների մշակման վրա: Մեծահասակների ուսումնառության մասնագետ դառնալու համար շատ կրթական և մասնագիտական ուղղություններ կան, և միշտ չէ, որ մասնագիտությունը ստանում են ֆորմալ մասնագիտական կառույցներում: Ի համեմատ այլ կրթական ենթակառուցվածքների ՝ մեծահասակների ուսումնառությունը բնութագրվում է կես դրույքով աշխատող անձնակազմի (և կամավոր հիմունքով աշխատողների) բարձր տոկոսներով, ովքեր կարող են ունենալ քիչ մասնագիտական հեռանկարներ և հաճախ վճարվում են ժամավճարով: Սոցիալական գործընկերները պետք է մասնակցեն մեծահասակների ուսումնառության անձնակազմի կարողությունների ճանաչմանը:
- ***Հաստատությունների որակի*** - հաստատությունների ընդհանուր որակը պետք է հասցեագրել հաստատության հավատարմագրված մեխանիզմների, որակի ապահովման շրջանակների ու կրթության և ուսուցման արդյունքների գնահատման և ներքին ու արտաքին մոնիթորինգի միջոցով: Կառավարությունը վճռական դեր ունի այս կապակցությամբ՝ կարգավորող շրջանակներ մշակելով, որակի չափորոշիչներ սահմանելով, հատկապես՝ կրթության և ուսուցման ու բարձրագույն կրթության մեջ առկա օրինակների և սկզբունքների վրա հիմնվելով, և այդ չափորոշիչները վավերականացնելով:
- **Մատուցման որակի** - Մեծահասակների ուսումնառության մատուցման բարելավումը նպաստում է մասնակցության բարձրացմանը: Արդյունավետ մատուցումը խթանող միջոցներն ընդգրկում են ուսումնառության կայքերի և տեղերում երեխաների խնամքի պարագաների առկայություն, բաց և հեռավար կրթություն հեռավոր վայրերում բնակվողների

համար, տեղեկատվություն և մասնագիտական կողմնորոշում, հատուկ ծրագրեր և ուսուցման ճկուն կառուցվածքներ:

Ուղերձ 2

Մեծահասակների ուսումնառության որակի բարձրացումը խթանելու համար անդամ պետությունները պետք է ներդրում կատարեն մեծահասակներին հարմարեցված ուսուցման մեթոդների և նյութերի բարելավման համար, կիրառեն սկզբնական ու շարունակական մասնագիտական զարգացման միջոցներ՝ ուսուցանողներին վերապատրաստելու և նրանց հմտությունները զարգացնելու համար:

3. Ուսումնառության արդյունքների ճանաչում և վավերականացում

Ցկյանս ուսումնառության հարացույցն արժևորում է կրթության բոլոր տեսակները՝ ֆորմալ, ոչ-ֆորմալ և ինֆորմալ: Ոչ-ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչումն ու վավերականացումը հիմանքարի արժեք են ներկայացնում ցկյանս ուսումնառության ռազմավարության մեջ: Ուսումնառության արդյունքները պետք է ճանաչել և արժևորել՝ հաշվի չառնելով, թե որտեղ և ինչպես են դրանք ձեռք բերվել: Ոչ-ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչումը սովորողներին՝ իրենց դիրքորոշումները հստակեցնելու, որոշակի մակարդակով կրթության որևէ ծրագրի մասնակցելու, որակավորման համար կրեդիտներ և/կամ կարողությունների վրա հիմնված որակավորում ձեռք բերելու հնարավորություն են ընձեռում: Նպատակն է՝ շահագրգռել դժկամ մասնակիցներին, արժևորել նախկին ուսումնառությունը և ժամանակ ու փող խնայել՝ կրճատելով կամ վերացնելով նորից սովորելու անհրաժեշտությունը: Այն հասարակությանը ոչ պետական ծախսերով ձեռք բերած հմտությունների օգտագործման հնարավորություն է տալիս:

Շատ անդամ պետություններ արդեն համակարգեր են մշակել՝ ուսումնառության արդյունքների ճանաչման և վավերականացման համար:

Ըչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման ու վավերականացման համար մշակված ընդհանուր եվրոպական սկզբունքները 2004թ.ընդունվել են կրթության խորհրդի կողմից՝ նման համակարգերում վստահություն ստեղծելու համար:

Այնուամենայնիվ, անդամ պետություններում վավերականացման մեթոդների ու համակարգերի հետագա մշակումը պահանջում է հետևյալ մարտահրավերների լուծումը՝

- վավերականացման ներկայացումը պետք է հիմնված լինի համապատասխան շահագրգիռ կողմերի, հատկապես՝ սոցիալական գործընկերների ներգրավման վրա՝ սեփականությունն ու վստահությունը խթանելու համար:
- անհրաժեշտ է բարելավել գնահատման մեթոդների և դրանք կիրառող հաստատությունների որակը,
- պետք է վերասահմանել կրթության և ուսուցման նպատակները (բոլոր մակարդակներում)՝ ելնելով ուսումնառության արդյունքներից: Սա կարևոր է վավերականացման համար. քանի դեռ նպատակները հիմնված են արդյունքների վրա, վավերականացումը դժվար է իրագործել:

Ուղերձ 3

Հաջորդ հինգ տարիների ընթացքում անդամ պետությունները պետք է համակարգեր մշակեն ոչ-ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ընդունման և վավերականացման համար՝ հիմնվելով ճանաչման

և վավերականացման մասին ընդհանուր եվրոպական սկզբունքների և առկա փորձերի վրա: Վավերականացման և ճանաչման համակարգերի մշակումը կարելի է կապել Ազգային Որակավորման Շրջանակների մշակման հետ Եվրոպական Որակավորման Շրջանակի ընդհանուր համատեքստում:

4. Ներդրումներ ծերացող բնակչության և միգրանտների համար

Ներդրումներ են անհրաժեշտ ծերացող բնակչության և միգրանտների համար:

Ակտիվ ծերացում

Փոփոխվող ժողովրդագրական վիճակը պահանջում է ոչ միայն միջին կենսաթոշակային տարիքի բարձրացում, այլև «ակտիվ ծերացման» քաղաքականություններ՝ հասցեագրելու կյանքը կենսաթոշակի անցնելուց առաջ և հետո: Մեծահասակների ուսումնառության մարտահրավերը երկու նպատակ է հետապնդում՝

- ապահովել ավելի երկար աշխատանքային կյանք. անհրաժեշտ է կատարելագործել և ընդլայնել ցկյանս ուսումնառությունը տարեց աշխատողների համար: Մեծահասակներին աշխատատեղերով ապահովելու համար ներդրումներ են անհրաժեշտ ողջ կյանքի ընթացքում, որոնք պետք է իրականացվեն կառավարության, բարձրաստիճան պաշտոնատար անձանց և սեկտորների կողմից:
- ապահովել շարունակական ուսումնառություն թոշակառուների համար (այդ թվում՝ օրինակ՝ բարձրացնել չափահաս ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթությանը), քանի որ մարդիկ հասնում են կենսաթոշակային տարիքի լավ հոգեկան և ֆիզիկական առողջությամբ, և հետ-կենսաթոշակային կյանքի միջին տևողությունը երկարաձգվել է: Համալսարանների մասին իր վերջին հաղորդագրության մեջ հանձնաժողովը կոչ է անում համալսարաններին՝ «առավել բաց լինել և դասընթացներ ապահովել ուսանողների համար իրենց կյանքի ավելի ուշ էտապներում»: Դասընթացները նպաստում են, որպեսզի թոշակառուները կապ պաշտպանեն իրենց սոցիալական միջավայրի հետ: Շատ երկրներում կրթության համակարգերը դեռ ուշադրություն չեն դարձնում քաղաքացիների այս խմբի առաջացող կարիքներին, ովքեր նաև ուրիշների ուսումնառությանն օժանդակելու մեծ ներուժ ունեն: Դեռ ավելին, Եվրոպայում թոշակառուներին, որոնց թիվն անընդհատ աճում է, պետք է համարել որպես մեծահասակների ուսումնառության ուսուցանողների և մանկավարժների պոտենցիալ աղբյուր:

Միգրացիա

Ինչպես նշվել է, մեծահասակների ուսումնառության մարտահրավերն է՝ աջակցել միգրանտների ինտեգրմանը հասարակության և տնտեսության մեջ և այն կարողությունների ու կրթական փորձերի ձեռք բերմանը, որոնք կարևոր են միգրացիայի համար: Այն պետք է ընդգրկի՝

- Եվրամիության աջակցության քաղաքականություններ և միջոցառումներ համապատասխան ծրագրերի օժանդակությամբ, որոնք ուղղված են կրթության և ուսուցման քաղաքականությունների որակի բարելավմանը միգրանտների մշտական բնակության վայրերում, հատկապես Եվրոպական հարևանության երկրներում :

- միգրանտների ֆորմալ, ոչ-ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման և կարողությունների գնահատման մեխանիզմների մշակում:
- մեծահասակների ուսումնառության հնարավորությունների ընդլայնում լեզվական, սոցիալական և մշակութային ինտեգրման հետ կապված:
- արդյունավետ և համապատասխան ուսուցման համակարգերի մշակում և միջմշակութային ուսումնառության խթանում:

Ուղերձ 4

Անդամ պետությունները պետք է բավարար ներդրումներ կատարեն մեծահասակների և միգրանտների կրթության և ուսուցման մեջ, բայց ամենակարևորը՝ ապահովեն արդյունավետությունը՝ սովորողի պահանջներին համապատասխանող կրթության և ուսուցման համակարգեր մշակելով: Նրանք նաև հասարակության և տնտեսության մեջ պետք է բարձրացնեն իրազեկությունը միգրանտների և մեծահասակների կարևոր դերի մասին:

5. Յուցիչներ և տվյալների բազաներ

Մեծահասակների ուսումնառության բազմազանությունը վերահսկելու և փաստերի վրա հիմնված քաղաքականություններ մշակելու համար ստույգ տվյալներ են անհրաժեշտ: Պարտադիր կրթության համեմատությամբ՝ մեծահասակների ուսումնառության տվյալները սահմանափակ են, ամենևին ոչ այն պատճառով, որ հաստատությունները ցրված են, ունեն տարբեր էություններ և հաճախ գործում են պետական սեկտորից դուրս: Տվյալների մատչելիությունն ու որակը բարելավվում է և կշարունակի բարելավվել առկա և հետագա միջազգային հետազոտությունների շնորհիվ: 2007թ. վերջին Եվրոստատի կողմից կատարած երկու ուսումնասիրությունների արդյունքները (Մեծահասակների կրթության ուսումնասիրությունը և Շարունակական մասնագիտական ուսուցման ուսումնասիրությունը ձեռնարկություններում) թարմ տեղեկություններ կապահովեն, գլխավորապես՝ ցկյանս ուսումնառությանը մեծահասակների մասնակցության, ձեռնարկությունների կողմից կատարած ներդրումների և շարունակական մասնագիտական ուսուցմանը մասնակցության մասին: Մեծահասակների հմտությունների մասին ՏՀԶԿ-ի (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) ուսումնասիրության նախապատրաստական աշխատանքներն ընթացքի մեջ են :

Հետագա հետազոտություն և վերլուծություն է անհրաժեշտ, որը կնպաստի առկա վիճակագրության օգտագործմանը և այնպիսի կարևոր խնդիրների բացահայտմանը, ինչպիսիք են ֆորմալ, ոչ-ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքները և ինֆորմալ ուսումնառության ընդհանուր դերը մեծահասակների կյանքում: Անհրաժեշտ է շեշտը դնել միտումների և կանխորոշումների վրա, որը քաղաքականության մշակմանն ու ծրագրերի կազմանն աջակցելու հնարավորություն կընձեռի: Հանձնաժողովը նաև օժանդակում է այս նպատակին՝ Իսպրայի Համատեղ Հետազոտությունների կենտրոնում ստեղծած ցկյանս ուսումնառության հետազոտությունների բաժնի աջակցությամբ:

Ուղերձ 5

Պետք է շարունակել մեծահասակների ուսումնառության մասին տվյալների որակի ու համադրելիության բարելավումը: Հատկապես մեծահասակների ուսումնառության առավելությունների ներընմբռնման, ինչպես նաև խոչընդոտները վերացնելու և հաստատությունների, ուսուցանողների և

ուսուցման մատուցման մասին լավ տվյալների ապահովման անհրաժեշտություն կա:
Այս կապակցությամբ Եվրոպական հանձնաժողովի, այդ թվում՝ Եվրոստատի աշխատանքները պետք է կենտրոնացնել առկա ուսումնասիրությունների և տվյալների արդյունավետ օգտագործման, հասկացությունների և սահմանումների ներդաշնակության բարելավման և տվյալների լուսաբանման, հաճախականության և արդիականացման ապահովման վրա:

4. Եվրամիության միջամտությունը

Եվրոպական ուսումնառությունը կարևոր դեր ունի այն մարտահրավերների լուծման գործում, որոնց բախվում է Եվրոպան: Հաղորդագրությունը վկայում է, որ որակի, արդյունավետության և արդարության ապահովումը շահավետ կլինի և' հասարակության, և' տնտեսության համար:

Անդամ պետությունները պետք է ստանձնեն այդ պարտավորությունը: Հանձնաժողովի դերն է՝

աջակցել նրանց՝ իրենց համակարգերի մոդեռնացման գործում: Հանձնաժողովն, ուստի առաջարկում է երկխոսության առկայություն անդամ պետությունների և համապատասխան շահագրգիռ կողմերի միջև՝ բացահայտելու՝

- Եվրոպական մակարդակում առկա ֆինանսական մեխանիզմների առավել արդյունավետ օգտագործման ուղիները (ինչպիսիք են՝ Կառուցվածքային Հիմնադրամները և ցկյանս ուսումնառության ծրագիրը);
- թե ինչպես գնահատել մեծահասակների ուսումնառության կարիքները Լիսաբոնի ռազմավարությամբ նախատեսված Ազգային Բարեփոխումների ծրագրերում:
- թե ինչպես ներգրավել շահագրգիռ կողմերին՝ երաշխավորելով, որ սույն հաղորդագրության մեջ առաջադրված ուղերձները տարբեր անդամ պետություններում տարբեր արձագանքներ են ստանում:
- թե ինչպես խրախուսել լավագույն փորձերի փոխանակումը «Կրթություն և ուսուցում 2010» ծրագրի շրջանակներում նախատեսված մասնագիտական ուսումնառության գործունեությունների միջոցով, ինչպես նաև Եվրամիության առկա ծրագրերի արդյունքների վրա հիմնվելով:
- վիճակագրական մոնիթորինգի բարելավման լավագույն մոտեցումները:

Այս կապակցությամբ Հանձնաժողովն առաջարկում է 2007թ. մշակել գործողությունների ծրագիր՝ սույն Հաղորդագրության մեջ առաջադրված ուղերձների արդյունավետ կատարումն ապահովելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

Մասնակցություն մեծահասակների ուսումնառությանը

Մեծահասակների մասնակցության ցուցանիշները ցկյանս ուսումնառության համար (2005թ.)



Աղբյուր՝ Եվրոստատ (Աշխատուժի ուսումնասիրություն), թիրախային խումբը՝ 25-64 տարեկան անձինք, ուսումնասիրության ժամկետը՝ 4 շաբաթ

Մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը՝ ըստ տարիքային և կրթական մակարդակների (2005թ.)



Աղբյուր՝ Եվրոստատ (Աշխատուժի ուսումնասիրություն), թիրախային խումբը՝ 25-64 տարեկան անձինք, հետազոտության ժամկետը՝ 4 շաբաթ

25- 64 տարիքային խմբերի մասնակցության ցուցանիշները Ֆորմալ և ոչ-ֆորմալ կրթության ու ուսուցման համար (2003թ.)



Աղբյուրը՝ Եվրոստատ (Ցկյանս ուսումնառության մոդուլ 2003), թիրախային խումբը՝ 25-64 տարեկան անձինք, հետազոտության ժամկետը՝ 12 ամիս

Կրթության և ուսուցման մեջ ներգրավված 25-64 տարեկան անձանց տոկոսային հարաբերությունը (2003թ.)



Աղբյուրը՝ Եվրոստատ (Ցկյանս ուսումնառության մոդուլ 2003), թիրախային խումբը՝ 25-64 տարեկան անձինք,

55-64 տարեկանների մասնակցության ցուցանիշները ուսումնառության որևէ տեսակի համար (2005թ.)



(*) Ի նշումներում ուսուցումը ներառված չէ Միացյալ Թագավորության աղբյուրում. Եվրոստատ (Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության մոդուլ 2003), թիրախային խումբը՝ 25-64 տարեկան անձինք: